

tion particulière avec laquelle je vous honore.

Signé, le Card. de Fleury.

P. S. Je fais traduire cette lettre en Arménien pour vous prouver que nous connaissons votre langue et le cas que nous en faisons.

Թարգմանութիւն նամակին Կարտինալ Ֆլորէայ՝ գրեալ առ Գրիգոր Պատրիարք Շղթայակիր :

Ի վերսայլ 131 Օգոստոսի 1739 :

Մեծ և զգալի մխիթարութեամբ ընկալայ, Տէ՛ր, զնամակն Ձեր՝ գրեալ յառաջնում առւոր Յուն վարի 'ի սոյն ամի . սքանչացայ 'ի վերայ փայլուն և բազմահանճար բանիցն՝ զոր ընծայէ չքեղ և մեծավայելուչ բարբառն հայկական : Բայց առաւել քան զայս ազդեաց ինձ 'ի տեսանելա զՁեզ հմուտ և ընտանի Ս . Գրոց՝ և լիովին տեղեակ իմաստից նորին :

Կատարեալ համակերպութիւն զգացմանց ձերոց ընդ ճշմարիտ աւանդութիւնս Առաքելական Եկեղեցւոյն Հռոմայ՝ որ մայր և դահեակ է ամենայն Եկեղեցեաց, է անըրկուն յանդիմանութիւն 'ի յաղթահարել զհրետիկոսս յետին դարու՝ և զնորութիւնսն՝ զոր կամեցան մոռնանել 'ի վարդապետութիւնս՝ զոր ընկալաք յԱռաքելոց անտի :

Խնամով սլահպանեմք 'ի փառաւոր գրատան Ամենաբարեպաշտ Թագաւոր Կայսեր մերոյ զբազմութիւ երեւելի յիշատակարանս առեալ 'ի ժողովոց՝ և զգրեանս առաջին Եպիսկոպոսաց Ձերոց՝ որք անմահ փառք են Եկեղեցւոյն Հայոց, և վրայ ապառնի դարուց 'ի ցուցանել և հաստատել զամբծութիւն հաւատոցն Ձերոց՝ և զհաստատամտութիւն՝ որով շնորհեաց Ձեզ Աստուած սլահպանել զայն (հաւատս) 'ի մէջ հալածանաց՝ զոր հերետիկոսքն և հերձուածողք երբէք չգաղարեցան գրգռել ընդդէմ Ձեր :

Այս է բախդ Եկեղեցւոյն Յիսուսի Գրիստոսի, և երկհաւոր Փրկիչն քարոզեաց մեզ զայն 'ի Ս . Աւետարանին :